

ՍՈՒՐԲ ԽԱԶ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ  
ԵԿԵՂԵՑԻ

Holy Cross  
Armenian Church

Գերշ. Տէր  
Թորգոմ Ս. Արք. Մանուկեան  
Առաջնորդ  
Նիւ Եօրք


26 Մայիս 1980

Սրբազան Հայր,

Սեպտեմբեր 1979 թուականէն ի վեր Արժանապատիւ Տէր Յուսիկ Քհնյ. Նշանեան, հակառակ իր յառաջացեալ տարիքին, մեծ զոհողութիւններով եւ դժուարութիւններով, ամէն շաբաթ Մոնթրէալէն քաղաքս գալով, Ս. Խաչ ծուխի համայնքին հոգեկան մխիթարութիւն ջամբեց:

Տէր Հօր աշխատութեան առ ի գնահատութիւն, իր քահանայ ձեռնադրութեան 35ամեակին առթիւ, Ժիսկան Խորհուրդս Ձերդ Սրբազնութենէն կը խնդրէ, որ բարեհաճիք Վեհափառ Հայրապետի մօտ բարեխօսել, որպէսզի Նորին Սրբութիւնը Տէր Հօր շնորհէ Աւագութեան աստիճան եւ լանջախաչ:

Ի Դիմաց  
Ժիսկան Խորհուրդի



Արմէն Բիւրքճեան  
Ատենապետ

Տօքթ. Վաչէ Բերամէթլիեան  
Ատենադպիր



Յ.Գ. Այս տարի է նաեւ Տէր Հօր ամուսնութեան յիսնամեակը:

